2002, ՀՈԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 20 (136)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ասորի Ուղղափառ եկեղեցու պետ Մար Իգնատիոս Զաքքա Իվաս Ա պատրիարքն այցելեց Սբ. Էջմիածին



Հոկտեմբերի 18-ին՝ վաղ առավոտյան, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերով Հայաստան ժամանեց Անտիոքի եւ Համայն Արեւելքի Ասորի Ուղղափառ քույր եկեղեցու գահակալ Մար Իգնատիոս Զաքքա Իվաս Ա պատրիարքը:

«Զվարթնոց» օդանավակայանում Ասորի եկեղեցու գահակալին եւ նրան ուղեկցող մետրոպոլիտներին Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի գլխավորությամբ դիմավորեցին Տ. Ներսես արք. Պոզապալյանը, Տ. Ոսկան արք. Գալփակյանը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, ՀՀ կառավարության ներկայացուցիչներ, Հայաստանում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Ֆայեզ Աբսին:

Հետմիջօրեին բարիգալստյան արարողություն տեղի ունեցավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում: Մայր տաճարում՝ Իջման Սբ. Սեղանի առջեւ, երկու հայրապետները աղոթք բարձրացրին առ Աստված եւ ապա փոխանակեցին ողջույնի խոսքեր:

*«Մեր ժողովուրդների եղբայրությունը հազարամյակների պատմություն ունի... Այդ եղբայրությունը նվիրագործվեց, երբ մեր երկու ժողովուրդները ընդունեցին Քրիստոսի Ավետարանի լույսը: Այդ դարավոր եղբայրությունը եղավ գրավականը, որպեսզի պատմության ընթացքին՝ ի Քրիստոս պահենք ու պահպանենք նույն հավատքը, նույն դավանությունը: Պատմության մեջ բազում փորձությունների միջով ենք անցել միասին: Հալածվել, հաճախ նաեւ նահատակվել մեր հավատքի համար: Սակայն Աստծո զորավոր Աջը պահել ու պահպանել է մեզ...*

*Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, Մենք հավատում ենք, որ նոր հազարամյակում մեր եղբայրությունը պիտի բարի արդյունավորում ունենա: Ասորի Ուղղափառ եկեղեցին եւ Հայ Առաքելական եկեղեցին, որպես Քրիստոսի հնագույն եկեղեցիներ, միասնաբար պիտի կարողանան իրենց խոսքը հնչեցնել եւ քրիստոնյա աշխարհի մեջ իրենց դերակատարությունը ստանձնել՝ ապահովելով մարդկության խաղաղ ու բարօր կյանքի մի նոր շրջան»,* - բարի գալուստ մաղթելով պատրիարքին՝ ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ ուրախությամբ փաստելով նաեւ աստվածմերձության խորհրդային տարիներից հետո հայ հոգեւոր վերազարթոնքի մասին:



Իր հերթին Ասորի Ուղղափառ եկեղեցու գահակալը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: *«Գոհունակություն ենք հայտնում Աստծուն այս օրհնյալ հողի գոյության համար եւ հպարտ ենք այս ժողովրդով... Աղոթում ենք Աստծուն, որպեսզի հայ եւ ասորի ժողովուրդները, հետեւելով իրենց հայրերի դավանանքին, պահպանեն իրենց հավատքը»,* - ասաց Նորին Սրբություն Զաքքա պատրիարքը:

Սա պատրիարքի երկրորդ այցն է Հայաստան: Օգտվելով առիթից՝ պատրիարքն անձամբ իր շնորհավորանքը հայտնեց Հայոց Հայրապետին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի, ինչպես նաեւ Վեհափառ Հայրապետի ընտրության առիթով:

Բարիգալստյան արարողությունից հետո երկու հայրապետները եկեղեցական թափորի ուղեկցությամբ շարժվեցին դեպի Վեհարան:

Հոկտեմբերի 18-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ Անտիոքի եւ Համայն Արեւելքի Ասորի Ուղղափառ քույր եկեղեցու գահակալ Մար Իգնատիոս Զաքքա Իվաս Ա պատրիարքը եպիսկոպոսաց դասի ուղեկցությամբ այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ իրենց խոնարհումը բերելու Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Երկու հայրապետները ծաղկեպսակներ դրեցին եղեռնի զոհերի հուշահամալիրին: Կատարվեց հոգեհանգստյան արարողություն:



Հովվապետերն այցելեցին նաեւ հուշահամալիրին կից գործող Ցեղասպանության թանգարան:

Հոկտեմբերի 19-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ու Զաքքա Ա-ն, իրենց ուղեկցող բարձրաստիճան հոգեւորականների հետ, ուխտի այցելություն կատարեցին Խոր Վիրապի վանք, ուր, Սբ. Գրիգոր Լուսավորչի Տանջանաց վիրապի վրա կառուցված եկեղեցում կատարեցին համատեղ աղոթքի արարողություն: Ապա Իգնատիոս պատրիարքը Գարեգին Ա Վեհափառի հրավերով այցելեց Արարատի մարզի Դիմիտրով գյուղը՝ ասորական եկեղեցի, ուր պատրիարքն իր օրհնությունը տվեց ասորի հավատացյալներին:



Օրվա երկրորդ կեսին երկու հովվապետերը մեկնեցին Սբ. Գեղարդավանք, որտեղ շքախմբին դիմավորեց եւ ողջույնի խոսք ասաց վանահայր հոգեշնորհ Տ. Ներսեհ աբղ. Խալաթյանը: Գարեգին Բ կաթողիկոսը, հավաքված հավատացյալներին ներկայացնելով Զաքքա պատրիարքին, ասաց. *«Եկել ենք եղբայրական մեր ուխտը նորոգելու եւ գոհություն առ Աստված բարձրացնելու, որ պահում եւ պահպանում է մեր երկու ժողովուրդներին՝ բոլոր փորձությունների միջով առաջնորդելով դեպի իրենց նոր կյանքի գեղեցիկ հորիզոնները»:*

Պատասխան խոսքում Զաքքա Ա պատրիարքն ասաց. *«1982 թվից ի վեր այս սրբավայրն այցելելու երկրորդ անգամը լինելով՝ ուրախ եմ տեսնել, որ Հայ Առաքելական եկեղեցին, իր գլուխ ունենալով Գարեգին Բ Վեհափառին, ոչ միայն պատմական եկեղեցի է, այլ նաեւ ապրող, կենդանի եկեղեցի է, եւ այստեղ ներկա ժողովուրդը ներկայացնում է այդ եկեղեցին»:*

Սբ. Գեղարդի վանքի Ավագ խորանի առջեւ համատեղ աղոթքի արարողությունից հետո երկու հայրապետներն ունկնդրեցին Վանքի երգչախմբի պատրաստած գեղարվեստական հայտագիրը:

Հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ներկայությամբ երկու հայրապետների, հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց: Պատարագիչն էր Իրաքի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ արք. Ասատուրյանը:

Հընթացս Ս. Պատարագի երկու քույր եկեղեցիների գահակալներն իրենց օրհնությունն ու հայրական պատգամները փոխանցեցին հավատացյալներին: *«Քրիստոնեական եկեղեցիների եղբայրական միությունը պիտի օգնի մեզ հավատի մեր վկայությունը բերելու մարդկանց, հաստատելու հույսի եւ սիրո մեջ, որպեսզի աստվածճանաչողությունը լուսավորի կյանքի իմաստը եւ պայմանավորի եւ առաջնորդի նրա ընթացքը: Փառք Տիրոջը, որ քրիստոսաէջ այս սուրբ տաճարում միասին աղոթում ենք վասն աշխարհի խաղաղության եւ մեր ժողովուրդների բարօրության ու հավատավոր անսայթաք կյանքի»,* - ասաց Ամենայն Հայոց կաթողիկոսն իր խոսքում:

Շարունակությունը էջ 2

